**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

---

ք. Երևան 10.07.2020թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
## թիվ ՍՑ-LO-2020/155

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

Մասնակից՝ «Ռաֆայել Վարդանյան Վարդանի» Ա/Ձ և «Մեկուսիչ» ԱԿ (համատեղ գործունեության պայմանագիր)

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2-20» ծածկագրով բաց մրցույթ, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի պահուստային թողարկման ДКВР 20/13 տեսակի 3 հատ շոգեկաթսաների ապատեղակայման և 2 հատ նոր շոգեկաթսաների տեղակայման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 22.06.2020թ.-ի թիվ 26/26/9277-2020 գրությամբ «Ռաֆայել Վարդանյան Վարդանի» Ա/Ձ-ին և «Մեկուսիչ» ԱԿ-ին (համատեղ գործունեության պայմանագիր) (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

# Պ Ա Ր Զ Ե Ց

## 1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 19.06.2020թ.-ի թիվ Ե/40/988-20 գրության հիման վրա, 22.06.2020թ.-ին «Ռաֆայել Վարդանյան Վարդանի» Ա/Ձ-ին և «Մեկուսիչ» ԱԿ-ին (համատեղ գործունեության պայմանագիր) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 22.06.2020թ.-ին:

23.06.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/155 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

30.06.2020թ.-ին և 10.07.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 30.06.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 10.07.2020թ.-ին:

## 2. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 19.06.2020թ.-ի թիվ Ե/40/988-20 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

*««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի պահուստային թողարկման ԴԿԲՐ 20/13 տեսակի 3 հատ շոգեկաթսաների ապատեղակայման և 2 հատ նոր շոգեկաթսաների տեղակայման աշխատանքների» գնման նպատակով կազմակերպել է գնման ընթացակարգ «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2-20» ծածկագրով, որին մասնակցության հայտ են ներկայացրել «Ամարաս-Յուս» ՍՊԸ-ն, «Երվադա» ՍՊԸ-ն և համատեղ գործունեության կարգով ԱՁ «Ռաֆայել Վարդանյան», «Մեկուսիչ» ԱԿ-ն:*

*Հայտերի բացման նիստում հանձնաժողովը արձանագրել է մասնակիցների հայտերում տեղ գտած թերությունները, մասնավորապես ԱՁ «Ռաֆայել Վարդանյան», «Մեկուսիչ» ԱԿ-ի հայտում՝ հրավերով սահմանված փաստաթղթերից ներբեռնված չէ.*

*1) հայտի ապահովում, որը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով (հավելված N 3): Ընդ որում հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթից կամ բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ,*

*2) իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները,*

*3) համատեղ գործունեության պայմանագիր:*

*Ներկայացրած փաստաթղթերը լրացված չեն հրավերով սահմանված կարգով*

*1) Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից:*

*2) հավելված N 1.1-ում մասնակիցը լրացնում է իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները:*

*Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մեկ օրով կասեցրել է հայտերի բացման և գնահատման նիստը, մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*

*Սակայն սահմանված ժամկետում ԱՁ «Ռաֆայել Վարդանյան», «Մեկուսիչ» ԱԿ-ն ոչ մի շտկում չի ներկայացրել:»:*

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ

կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2-20» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Ռաֆայել Վարդանյան Վարդանի» Ա/Ձ-ի և «Մեկուսիչ» ԱԿ-ի (համատեղ գործունեության պայմանագիր) տվյալները՝ համապատասխան հիմքերով:

**3. <u>«Ռաֆայել Վարդանյան Վարդանի» Ա/Ձ-ի և «Մեկուսիչ» ԱԿ-ի (համատեղ գործունեության պայմանագիր) ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 23.06.2020թ.-ին գրությամբ դիմել է «Ռաֆայել Վարդանյան Վարդանի» Ա/Ձ-ին և «Մեկուսիչ» ԱԿ-ին (համատեղ գործունեության պայմանագիր)՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.06.2020թ.-ի թիվ 26/26/9277-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցները ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստի տեղի, օրվա և ժամի մասին, չեն ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև հրավիրված նիստին:

**4. <u>ՍՑ-LO-2020/155 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի պահուստային թողարկման ԴԿԲՐ 20/13 տեսակի 3 հատ շոգեկաթսաների ապատեղակայման և 2 հատ նոր շոգեկաթսաների տեղակայման աշխատանքների ձեռքբերման նպատակով 04.05.2020թ.-ին հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2-20» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Ռաֆայել Վարդանյան Վարդանի» Ա/Ձ-ն և «Մեկուսիչ» ԱԿ-ն (համատեղ գործունեության պայմանագիր):

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 15.06.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ռաֆայել Վարդանյան Վարդանի» Ա/Ձ-ի և «Մեկուսիչ» ԱԿ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են

եղել անհամապատասխանություններ, մասնավորապես՝ բացակայել է հայտի ապահովումը, «Ռաֆայել Վարդանյան Վարդանի» Ա/Ձ-ի և «Մեկուսիչ» ԱԿ-ի համատեղ գործունեության պայմանագիրը և վերջիններիս կողմից հատատված ծավալաթերթ-նախահաշիվը, բացի այդ ներկայացված հայտի հավելված 1.1-ը և հավելված 2-ը հաստատված չեն եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ կոնսորցիումի բոլոր անդամների կողմից, ինչպես նաև հավելված 1.1-ը պետք է լրացվեր համաձայն՝ հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող, սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները:

iv. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, 16.06.2020թ.-ին մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել է Մասնակիցներին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ:

v. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 16.06.2020թ.-ին Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է նույնաբովանդակ ծանուցում:

vi. Հանձնաժողովի 18.06.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները և Հանձնաժողովը ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերության պահանջներով համապատասխան գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը:

## 5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.06.2020թ.-ի թիվ 26/26/9277-2020 գրությամբ «Ռաֆայել Վարդանյան Վարդանի» Ա/Ձ-ին և «Մեկուսիչ» ԱԿ-ին (համատեղ գործունեության պայմանագիր) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացվում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա

նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի 4.3-րդ կետի 4-րդ մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները:

Հրավերի 4.3-րդ կետի 6-րդ մասի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում՝ Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, ընդ որում, որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը

դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի պահուստային թողարկման ДКВР 20/13 տեսակի 3 հատ շոգեկաթսաների ապատեղակայման և 2 հատ նոր շոգեկաթսաների տեղակայման աշխատանքների ձեռքբերման նպատակով 04.05.2020թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2-20» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Ռաֆայել Վարդանյան Վարդանի» Ա/Ձ-ի և «Մեկուսիչ» ԱԿ-ի (համատեղ գործունեության պայմանագիր) կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, մասնավորապես՝ բացակայել է հայտի ապահովումը, «Ռաֆայել Վարդանյան Վարդանի» Ա/Ձ-ի և «Մեկուսիչ» ԱԿ-ի համատեղ գործունեության պայմանագիրը և վերջիններիս կողմից հատատված ծավալաթերթ-նախահաշիվը, բացի այդ ներկայացված հայտի հավելված 1.1-ը և հավելված 2-ը հաստատված չեն եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ կոնսորցիումի բոլոր անդամների կողմից, ինչպես նաև հավելված 1.1-ը պետք է լրացվեր համաձայն՝ հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող, սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, 26.05.2020թ.-ին մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել է Մասնակցին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, 16.06.2020թ.-ին մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել է Մասնակիցներին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 16.06.2020թ.-ին Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է նույնաբովանդակ ծանուցում:

Հանձնաժողովի 18.06.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները և Հանձնաժողովը ղեկավարվելով «Գնումների մասին»

ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերության պահանջներով համապատասխան գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը

կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ռաֆայել Վարդանյան Վարդանի» Ա/Ձ-ն և «Մեկուսիչ» ԱԿ-ն (համատեղ գործունեության պայմանագիր), Պատվիրատուի կողմից հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամանակահատվածում, չշտկելով արձանագրված անհամապատասխանությունները, խախտել են գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակիցների հետագա մասնակցության դադարեցմանը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով: Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր.

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները.

3) մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն.

4) համատեղ գործունեության պայմանագրի կողմը (կողմերը) չի (չեն) կարող նույն ընթացակարգին ներկայացնել առանձին հայտ (հայտեր):

Սույն դեպքում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2-20» ծածկագրով բաց մրցույթին մասնակիցները հանդես են եկել համատեղ գործունեության պայմանագրով (կոնսորցիում), ուստի մասնակիցները պետք է կրեն համատեղ և համապարտ պատասխանատվություն, հիմք ընդունելով Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ ենթակետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.06.2020թ.-ի թիվ 26/26/9277-2020 գրությամբ «Ռաֆայել Վարդանյան Վարդանի» Ա/Ձ-ին և «Մեկուսիչ» ԱԿ-ին (համատեղ գործունեության պայմանագիր) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/155 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Ռաֆայել Վարդանյան Վարդանի» Ա/Ձ-ին և «Մեկուսիչ» ԱԿ-ին (համատեղ գործունեության պայմանագիր) ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝** **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**